ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

21.01.2014թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան
քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան
մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արայիկ Հակոբյան,
համայնքի 21 բնակիչ:

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի տարեկան հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2013 թվականի տարեկան բյուջեի կատարողականը՝

2013 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտների հաշվարկը պլանավորվել է 26834,2 հազար դրամ, որից սեփական եկամուտները կազմում է 5599,5 հազար դրամ է: Հավաքագրվել և բյուջե է մուտքագրվել սեփական եկամուտ՝ 5407,2 հազար դրամ, որը կազմում է 96,6 %:

Ֆոնդային մասով չեն եղել պլանային և փաստացի մուտքեր:

Տարեսկզբի ազատ մնացորդը եղել է 486,1 հազար դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1890,0	1892,3	100,1
2	գույքահարկ	2831,6	2529,5	89,3
3	տեղական տուրք	159,0	240,2	151,1
4	հողի վարձակալության վճար	18,9	18,9	100,0
5	տեղական վճար (աղբահանություն)	700,0	726,3	103,7
6	դոտացիա	20535,5	20535,5	100,0
7	սուբվենցիա	699,2	699,2	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	26834,2	26641,9	99,3

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	15225,3	15077,3	99,0
2	նախադպրոցական կրթություն	8991,5	8991,5	100,0
3	սոց.ծրագրեր	700,0	700,0	100,0
4	այլ մշակութային կազմակերպություններ	950,0	682,8	71,9
5	հրատարակչություն	133,5	133,3	99,8
6	աղբահանություն	1320,0	1320,0	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	27320,3	26904,9	98,5

2. 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 8 նիստ՝ 6 հերթական, 2 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 45 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 38 որոշում, արձակվել՝ 20 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 203 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 524 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 108 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, բուժկետի աշխատողների համար 313,4 հազար դրամով գնվել են նվերներ:
7. Սոցիալական ծրագրերից՝ 700,0 հազար դրամ տրամադրվել է՝
   1) համայնքի 9 անապահով ընտանիքներին՝ 275,0 հազար դրամ,
   2) մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի միակ վետերանին՝ դրամական օգնություն՝ 30,0 հազար դրամ,
   3) պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությանը՝ 15,0 հազար դրամ,
   4) բնական աղետից տուժած գյուղացիների օգնության հիմնադրամին՝ 100,0 հազար դրամ,
   5) թվով 20 դպրոցական երեխաներին՝ աշակերտական հագուստ գնելու համար՝ 280,0 հազար դրամ:
8. Համայնքի 2013 թվականի բյուջեի ֆոնդային մասից տրամադրված 150,0 հազար դրամ գումարով գնվել է դաշնամուր և նվիրաբերվել մանկապարտեզին:
9. Գյուղապետարանում ներդրվել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» ծրագիրը, որի համար վճարվել է 250,0 հազար դրամ գումար:
10. Համակարգչային ձևավորման և քարտեզային տարբերակով ստեղծվել է Այգեկ համայնքի հասցեավորման հատակագիծը, որի համար ծախսվել է 250,0 հազար դրամ գումար:
11. Գյուղապետարանի աջակցությամբ և բարեգործական հիմունքներով՝
    1) կազմակերպվել է ծառատունկ, որի ժամանակ տնկվել է 360 դեկորատիվ ծառերի տնկիներ՝ գյուղապետարանի տարածքում, 50 հատ վարդի և այլ թփեր՝ մանկապարտեզի և դպրոցի տարածքներում,

2) ասֆալտապատվել են (փոսալցումով) 400-450քմ ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհներ, որի համար օգտագործվել է 16 տոննա ասֆալտ,
3) բնակիչների մասնակցությամբ կառուցվել է հասարակական զուգարան,
4) անցկացվել է գյուղապետարանի աշխատակազմի կրտսեր պաշտոն զբաղեցնող երեք համայնքային ծառայողների հերթական ատեստավորումը:

12. Համայնքի առաջին դասարան հաճախող 32 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 262,4 հազար դրամ գումարով:
13. Գնվել է նոր համակարգիչ և մոնիտոր՝ 209,0 հազար դրամ գումարով:
14. Ամանորի կապակցությամբ մանկապարտեզի երեխաների համար գնվել են ամանորյա տոպրակներ՝ 77,0 հազար դրամ գումարով, իսկ աշխատակիցների համար՝ համերգի տոմսեր՝ 30,0 հազար դրամով:
15. Ակումբի և գրադարանի շենքերի համար հանվել են սեփականության իրավունքի վկայականներ, որի համար տրամադրվել է 150,0 հազար դրամ:
16. Մշակութային ծարգրերի կազմակերպման համար, ելնելով բյուջետային ծախսերի անհրաժեշտությունից, ստեղծվել է նոր «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
17. Համայնքների միությանը փոխանցվել է 16,0 հազար դրամ անդամավճար:
18. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով, ընդամենը՝ 1417,6 հազար դրամ գումար, որից 1-ին կիսամյակում 500,0 հազար դրամ, 2-րդ կիսամյակում 917,6 հազար դրամ:
19. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
20. Աշխատավարձի վճարումների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքի փողոցների լուսավորության անցկացում:*
2. *Գերեզմանատան ցանկապատում:*
3. *Մանկապարտեզի շենքի 2-րդ հարկի մի մասնաշենքի վերանորոգում:*
4. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2014 թվականի հունվարի 21
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ